

ԲՆՈԳՏԱՆՈՐԾՄԱՆ ՏՆՏԵՍԱՀՏՈՒԹՅՈՒՆ



ԴԱՎԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՊՃ բնօգտագործման տնտեսագիտության
ամբիոնի ասպիրանտ

ԱԴՏՈՏՄԱՆ ԱՆՇԱՐԺ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՆՈՐՄԱԿՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻՉՄԱՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ <<-ՌԻՄ

Հոդվածում դիտարկվել են աղտոտման անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումների տեխնոլոգիական և տարածքային նորմավորման մեխամիզմների մշակման ու ներդրման հարցերը։ Կարևորվել է «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» սկզբունքով արտանետման ցուցանիշների հաշվարկման մեխամիզմը։ Դրա թույլ է տալիս հավասարակշռություն ստեղծել աղտոտումը նվազագույնի հասցնելու պահանջի և տեխնիկական իրական հնարավորությունների միջև, միևնույն ժամանակ ապահովել մթնոլորտային օդի աղտոտման մակարդակի նկատմամբ հսկողության սահմանման միասնական մոտեցման կիրառման պայմաններ։

Հիմնաբառեր. աղտոտում, վնասակար նյութեր, արտանետում,
մթնոլորտային օդ, տեխնոլոգիա, նորմավորում, մեխամիզմ

Մթնոլորտային օդի պահպանության պետական կարգավորման կարևորագույն գործիք է համարվում մթնոլորտային օդի աղտոտող նյութերի արտանետումների նորմավորումը։ Նորմավորման նպատակն է մթնոլորտային օդի որակի պահպանման այն չափորոշիչների ապահովումը, որոնք կանոնակարգում են մարդու առողջության և էկոլոգիական համակարգերի համար վնասակար (աղտոտող) նյութերի սահմանային թույլատրելի պարունակությունը, ինչպես նաև համապատասխան ցուցանիշների չբարձրացնան պայմանները։

Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի նորմավորումը մթնոլորտային օդի պահպանության կառավարման համակարգի հիմքն է: Ըստ այդմ՝ խնդիր է դրվել Վերլուծելու արտանետումների նորմավորման Հայաստանում գործող կարգը, բացահայտելու թերությունները, առանձնացնելու լուծման ենթակա խնդիրները և, այլ երկրների փորձից ելնելով, մշակելու դրանց լուծման անհրաժեշտ գործողություններ:

Ներկայումս մթնոլորտային օդի աղտոտման արտանետումների նորմավորման հարցերը կանոնակարգվում են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքով¹ և օրենքի կիրակումն ապահովող Ենթաօրենսդրական ակտերով: 2007–2012 թթ. ընթացքում ընդունվել են մի շարք որոշումներ, որոնք հստակեցրել են արտանետումների նորմավորման գործընթացները և ավելի բարեհաջիկ դարձրել մթնոլորտային օդի պահպանության կառավարումը: Մասնավորապես՝

1. Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգով² կանոնակարգվել են աղտոտման անշարժ աղբյուրներ ունեցող կազմակերպությունների ու մթնոլորտային օդի պահպանության բնագավառում լիազոր պետական մարմնի հարաբերությունները տնտեսակարող սուբյեկտներին պետական հաշվառման վերցնելու գործընթացում:

2. Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգով³ վերացվել են անշարժ աղբյուրներ ունեցող կազմակերպությունների արտանետումների նորմավորման բնագավառում առկա հրավական դաշտի որոշ բացերը, մասնավորապես՝ սահմանվել է մթնոլորտային օդի աղտոտման անշարժ աղբյուրներ ունեցող կազմակերպությունների սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման, իրավասու պետական մարմնի կողմից դրանց քննության և արտանետումներ կատարելու թույլտվություններ տալու կարգը: Դրա հանաձայն՝ սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) նախագծերը տնտեսավարող սուբյեկտները կարող են ներկայացնել տարբերակով՝ լիազոր մարմնի էլեկտրոնային կայքում տեղադրմամբ: Այդ կարգի ներդրումը հնարավորություն է տվել մի կողմից՝ պարզեցնելու նախագծերի ներկայացման և արտանետումների թույլտվություններ ստանալու ընթացակարգը, պակասեցնելու վարչարությունը և նվազեցնելու կոռուպցիոն ռիսկերը, մյուս կողմից՝ թափանցիկ դարձնելու ինչպես տնտեսավարող սուբյեկտների բնապահպանական գործունեությունը, այնպես էլ պետական վերահսկողությունը դրա նկատմամբ:

ՀՀ-ում մթնոլորտային օդի պահպանության բնագավառում նորմավորման համակարգը ներառում է.

- աղտոտման անշարժ և շարժական աղբյուրներից աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվներ,

¹ Տես «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-12, ընդունված 11.10.1994 թ., սկզբնաղբյուր՝ ՀՀԿԽՏ, 1994/21, հոդվ. 365:

² Տես ՀՀ Կառավարության 2009 թվականի ապրիլի 22-ի «Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին» N259 որոշումը, սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 1999.05.06/11(77):

³ Տես ՀՀ Կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և ՀՀ Կառավարության 1999 թվականի մարտի 30-ի 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 1673-Ն որոշումը, սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2013.01.16/3(943):

- ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվներ:

Արտանետումների սահմանային չափաբանակների որոշման համար հիմք են հանդիսանում «օդի պահանջվող օգտագործման» (ՕՊՕ) ցուցանիշի հաշվարկը և մթնոլորտային օդի վիճակի գնահատման համար օգտագործվող սահմանային թույլատրելի խտությունների ցուցանիշը: «Օդի պահանջվող օգտագործումը» մաքուր օդի այն ծավալն է, որն անհրաժեշտ է աղտոտող նյութերի արտանետումները մինչև սահմանային թույլատրելի խտությունների մակարդակը նորացնելու համար:

Այսպես՝ մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների սահմանային չափաբանակների որոշման՝ ՀՀ-ում գործող կարգով վնասակար նյութերի արտանետումների նորմատիվները մշակվում են այն վնասակար նյութերի դեպքում, որոնց համար սահմանված են մթնոլորտում դրանց պարունակության առողջապահական, բնապահպանական կամ այլ նորմատիվներ: Նման նորմատիվներ սահմանված չլինելու դեպքում տնտեսավարող սուբյեկտը դիմում է լիազոր մարմնին՝ տվյալ նյութի համար նորմատիվ մշակելու հայտով: Հարկ է նշել, որ առողջապահական և բնապահպանական նորմատիվների մշակումը բավականին բարդ գործընթաց է: Այն պահանջում է երկար ժամանակ և կավածք է ֆինանսական մեծ ծախսերի հետ: Շատ դեպքերում նույնիսկ հնարավոր չի լինում պարզել, թե ինչ ազդեցություն կարող են ունենալ արտանետվող նյութերը մարդու առողջության կամ էկոհամակարգի որևէ բարկացուցչի վրա տարիներ անց:

ՕՊՕ-ն, տարեկան ցուցանիշներով, երկու հարյուր միլիոնից մինչև երկու միլիիարդ խորանարդ մետր կազմելու դեպքում արտանետումների սահմանային չափաբանակ են համարվում դրանց գործունեության արդյունքում առաջացած փաստացի արտանետումները: ՕՊՕ-ի՝ ըստ տարվա երկու միլիարդ խորանարդ մետրը գերազանցելու դեպքում արտանետման չափաբանակները որոշվում են սահմանային թույլատրելի արտանետումների նախագծերի հիման վրա: Այս պարագայում արտանետումների սահմանային չափաբանակները համարվում են ընդունելի, եթե աղտոտող նյութերի արտանետումները ցրվելու հետևանքով գետնամերձ շերտում (ամենամոտ բնակելի տարածքում) առաջացող խտությունները չեն գերազանցում սահմանային թույլատրելի խտությունները (Սթե): Համապատասխան Սթե գերազանցման դեպքում, եթե պահպանվում է տվյալ տարածքի ֆոնային աղտոտվածության մակարդակը, մշակվում է արտանետումների նվազեցման միջոցառումների ծրագիր: Ֆոնային աղտոտվածության գերազանցման դեպքում ՍթԱ նորմատիվները դիտարկվում են որպես ժամանակավոր, որոնք գործում են մինչև բնապահպանության նախարարության կողմից վնասակար նյութերով ֆոնային գերադասութվածություն ունեցող տարածքներում նորմավորման իրականացման հիման վրա նոր չափաբանակների որոշումը: Հարկ է նշել, որ, անկախ այն հանգամանքից՝ տեղի է ունենում տարածքի ֆոնային աղտոտվածության մակարդակի բարձրացում, թե արտանետումները հանգեցնում են Սթե նորմատիվի խախտման, գործող կարգը հնարավորություն է տալիս սահմանելու մթնոլորտային օդն աղտոտող նյութերի չափաբանակներ՝ ելնելով ստեղծված իրավիճակից:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների նորմավորման կիրառվող փորձն անարդյունա-

Վետ է մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների և դրա հիման վրա ֆիզիկական վնասակար ներգործությունների կարգավորման, մթնոլորտային օդի պահպանության նկատմամբ պետական վերահսկողության իրականացման տեսանկյունից: Գնահատականում արտանետման սահմանաչափերը սահմանվում են՝ հիմք ընդունելով դրա փաստացի մակարդակը: Այս հանգամանքը չի խթանում տնտեսավարող սուբյեկտներին՝ գրաղվելու բնապահպանական գործունեությամբ:

Աղտոտման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդն աղտոտող արտանետումների նորմավորման հարցերը կարգավորող իրավական ակտերը չեն լուծում ՍԹԱ նորմատիվների սահմանմանը և արտանետումների թույլտվությանը վերաբերող որոշ խնդիրներ, համապատասխան դրույթներն էլ հինացած են և ունեն վերանայման կարիք՝ նկատի ունենալով օրենսդրության ներկա պահանջները և ԵՄ օրենսդրության հետ մոտարկման քաղաքականությունը: Նախևառաջ անհրաժեշտ է օրենսդրորեն տարբերակել արտանետումների նորմավորման ուղղված պահանջները՝ կամված դրանց քանակություններից և վնասակարությունից և, ըստ այդմ, կանոնակարգել արտանետման թույլտվություն տալու գործընթացները, որոնք ներկայումս իրականացվում են մեկ գործընթացով:

Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմավորման՝ ՀՀ-ում ընդունված մոտեցումը կողմնորոշված է դեպի ներգործության արդյունքները: Այդ է վկայում նաև «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածով սահմանված սկզբունքը՝ «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և մթնոլորտային օդի վրա սահմանային թույլատրելի ֆիզիկական վնասակար ներգործությունների նորմատիվները սահմանվում են այնպես, որ, հաշվի առնելով տվյալ տարածաշրջանի զարգացման հեռանկարները, տվյալ տարածքից և այլ տարածքներից աղտոտող նյութերի արտանետումները և ֆիզիկական վնասակար ներգործությունները, չհանգեցնեն մթնոլորտային օդում աղտոտող նյութերի ՍԹԽ-ների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների գերազանցման»: Այլ կերպ ասած՝ սահմանային թույլատրելի վնասակար ներգործության նորմատիվներ սահմանելով, նպատակ է հետապնդվում պահպանելու մթնոլորտային օդում առանձին նյութերի այն առավելագույն խտությունը, որի գերազանցումը ուղղակի կամ անուղղակի ծնով կարող է բացասական ազդեցություն ունենալ բնակչության առողջության կամ շրջակա միջավայրի վրա: Ըստ այդմ՝ ելնելով էկոհամակարգի առավել խոցելի բաղադրիչների վրա որոշակի աղբյուրից արտանետումների ներգործության փաստացի արդյունքներից, որոշվում է դրանց բացասակար ներգործության նվազեցման աստիճանը:

ԵՄ օրենսդրության հետ մոտարկման քաղաքականությունը պահանջում է ներդնել աղտոտման անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումների տեխնոլոգիական նորմավորման մեխանիզմ: Արտանետումների նորմավորումը տեխնոլոգիական սարքավորման կամ գործընթացի էկոլոգիականության մակարդակի բնութագիրն է, որը լայնորեն օգտագործվում է աշխարհում: Նորմատիվների առկայությունը թույլ է տալիս էականորեն պարզեցնել ձեռնարկությունների օդապահպան գործունեության վերահսկողությունը և հիմնավորված կերպով մշակել շրջակա բնական միջավայրի վրա որոշակի օբյեկտի բացասակար ազդեցության նվազեցման ռազմավարություն:

Տեխնոլոգիական (տեխնիկական) նորմավորման սկզբունքը նախատեսված է նաև միջազգային համաձայնագրերով, որոնք վավերացված են Հայաստանի Հանրապետության օրենքով: Ինչ վերաբերում է մթնոլորտային օդին, ապա դա ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 1997 թվականի «Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիան է, որը <<հ համար ուժի մեջ է մտել 2004 թվականից⁴: Այսպես՝ կոնվենցիայի «Օդի որակի կառավարումը» 6-րդ հոդվածը, որպես պայմանավորվող կողմերի պարտավորություն, նշում է. «Լավագույն քաղաքանությունը և ռազմավարությունը՝ ներառյալ օդի որակի կառավարման համակարգերը և, որպես դրանց անքակտելի մաս, օդի աղտոտման դեմ պայքարի այն միջոցները, որոնք համատեղելի են հավասարակշռված զարգացման հետ՝ մասնավորապես առկա լավագույն և տնտեսապես արդարացված, ինչպես նաև սակավաճնացրող կամ անմնացրող տեխնոլոգիաների կիրառման միջոցով»: Կոնվենցիայում օգտագործվում է «լավագույն հասանելի տեխնոլոգիա» (L_S) եզրույթը: Հայերեն թարգմանությամբ այլ փաստաթղթերում Best Available Technologies (BAT) անգլերեն տերմինը «գոյություն ունեցող կամ հասանելի լավագույն տեխնոլոգիան» է: Կարևոր է դրա մեկնաբանությունը, այսինքն՝ այս կամ այն տեխնոլոգիայի ընտրության չափորոշիչները, դա լավագույնների ու հասանելիների շարքը դասելը: Կերոնշյալ կոնվենցիայում բերվում են ընտրության հիմնական չափորոշիչները՝ էկոլոգիական անվտանգության տեսանկյունից տեխնոլոգիական նորամուծությունները, որոնք հաջողությամբ փորձարկվել և տնտեսապես նպատակահարմար են:

Արտանետումների հաշվառման տեխնոլոգիական սկզբունքը արդիականություն է ձեռք բերել Հայաստանի՝ կիոտոյի արձանագրությանը⁵ միանալուց հետո, քանի որ ջերմոցային գագերի ընդհանուր մարդածին արտանետումների գույքագրման հիմքում դրանց արտանետման գործակիցներն են, որոնք, ըստ էության, տեխնիկական (տեխնոլոգիական) նորմատիվներ են:

<< օդապահպանության գործում տեխնոլոգիական նորմավորման սկզբունքը մթնոլորտային օդի աղտոտող նյութերի արտանետումների նորմատիվների սահմանման ժամանակ չի կիրառվում, իսկ օրենսդրահիրավական դաշտում առկա է միայն «լավագույն հասանելի տեխնոլոգիա» հասկացության մեկնաբանումը: Ըստ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» <<օրենքի՝ L_S-ն սահմանվում է որպես «գիտատեխնիկական ժամանակակից նվազումների վրա հիմնված արտադրական տեխնոլոգիական լուծումներ, գործընթացներ և ռեժիմներ, որոնք հաստատել են իրենց գործնական կիրառելիությունը, և որոնց կիրառումը նպաստում է բնական ռեսուրսների խնայողաբար օգտագործմանը և շրջակա միջավայրի վրա (մթնոլորտ, ջրային օբյեկտներ, հողային ծածկույթ, կենսալորտ) վնասակար ներգործության նվազեցմանը», իսկ հոդված 15-ով մթնոլորտային օդի աղտոտող նյութերի արտանետումների նկատմամբ պահանջների առումով ընդամենը սահմանվում է «....հետևողականորեն բարելավել տեխնոլոգիական պրոցեսները՝ ներդնելով «լավագույն հասանելի տեխնոլոգիաներ»»: Մթնոլորտային օդի աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմա-

⁴ Տես «Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիա, սկզբնաղբյուր՝ <<ԱԳՆԴՏ 2004. 12.20/4(12):

⁵ Տես <<Ազգային ժողովի՝ 26 դեկտեմբերի 2002 թ. «Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիային կից կիոտոյի արձանագրությանը միանալու մասին» 232-Ն որոշումը, սկզբնաղբյուր՝ ՀՀԴՏ 2003.01.22/5(240) հոդվ.72:

տիվների մշակման և հաստատման կարգով էլ սահմանվում է. «....մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների քանակությունները յուրաքանչյուր նյութի համար հաշվարկվում են՝ ելնելով տնտեսավարող սուբյեկտների աշխատանքային ռեժիմից, տեխնոլոգիական գործընթացների և սարքավորումների շահագործման ցուցանիշներից, հումքի և վառելիքի սպառման քանակներից, տարեկան կտրվածքով»⁶: Այս մոտեցումը նույնպես տեխնոլոգիական նորմավորման սկզբունքի կիրառում է:

Մեր կարծիքով՝ աղտոտման անշարժ, շարժական և այլ աղբյուրներից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի արտանետումների սահմանային թույլատրելի քանակությունները պետք է այնպես սահմանվեն, որ շահագործման նորմալ պայմաններում չգերազանցեն արտանետումների այն մակարդակը, որը հատուկ է «լավագույն հասանելի տեխնոլոգիաներին»: Ընդ որում, նորմավորման այս համակարգը ենթադրում է հարկային և այլ արտոնությունների տրամադրում, էներգիայի ոչ ավանդական տեսակների օգտագործում և շրջակա միջավայրի պահպանության այլ արդյունավետ միջոցառումներ: Այս նպատակով անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել «տեխնոլոգիական» կամ «տեխնիկական նորմատիվ» հասկացությունները:

Մթնոլորտային օդի պահպանության կառավարմանն ուղղված ԼՀՏ հատուկ արտանետումների մակարդակներով նորմավորման կարգի ներդրումը հնարավորություն կտա լուծելու նաև մթնոլորտային օդի կառավարման մյուս բաղադրիչներում (հաշվառում և վերահսկողություն) առկա խնդիրները: Դա թույլ կտա բարելավել մթնոլորտային օդի կառավարման համակարգը, քանի որ կառավարման այս բաղադրիչներից որևէ մեկում առաջացած խնդիրները կարող են խաթարել կառավարման ամբողջ համակարգի գործունեությունը:

Համաշխարհային պրակտիկայում տեխնոլոգիական նորմավորումը լայն տարածում է ստացել որպես առավել առաջադիմական, էկոլոգիապես նաբար տեխնոլոգիաների ներդրման գործիք: Հաճննդիանուր ճանաչված և ավելի կատարյալ է համարվում Եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունված բնապահպանական օրենսդրության համակարգը: «Աղտոտման համալիր կանխման և վերահսկման մասին» 2008/1/ԵՍ հրահանգով⁷ ԵՍ բնապահպանական քաղաքականության հիմնական նպատակներն ու սկզբունքները ներառում են, մասնավորապես՝ «աղտոտման կանխում, նվազեցում և, հնարավորության սահմաններում, վերացում՝ համաձայն աղտոտման համար նյութական պատասխանատվության և աղտոտման կանխման սկզբունքների»: Առաջարկվում է արտանետումների չափաբանակների սահմանման ժամանակ իհմնակել լավագույն հասանելի տեխնոլոգիաների վրա՝ հաշվի առնելով համապատասխան ծերնարկության տեխնիկական առանձնահատկությունները, որա աշխարհագրական դիրքը և տեղի բնապահպանական առանձնահատկությունները: Ըստ էության, ԵՍ երկրներում աղտոտման կանխման, նվազեցման նպատակով մթնոլորտային օդի կառավարման հիմքում

⁶ ՀՀ Կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և ՀՀ Կառավարության 1999 թվականի մարտի 30-ի 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 1673-Ն որոշումը, սկզբնադրյուր՝ ՀՀՊ 2013.01.16/3(943):

⁷ Տես Եվրոպական պալյամենտի և խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի 2008/1/ԵС հրահանգը «Աղտոտման համալիր կանխման և վերահսկման մասին», ΤSL024, 29.01.2008 թ., էջ 8, <http://www.translation-centre.am/>)

արտանետումների տեխնոլոգիական և տարածքային նորմավորման մեխանիզմն է՝ թույլատրելի այնպիսի քանակությունների սահմանմամբ, որոնք շահագործման նորմալ պայմաններում չեն գերազանցում L_S հատուկ արտանետումների մակարդակը:

Դեպի մթնոլորտ, ջրային և հողային ռեսուրսներ կատարվող արտանետումները վերահսկելու տարբեր մոտեցումները կարող են նպաստել աղտոտման անցմանը մի բնական միջավայրից մյուսը՝ շրջակա միջավայրն ամբողջությամբ պաշտպանելու փոխարեն: Հետևաբար՝ անհրաժեշտ է միասնական մոտեցում նախատեսել դեպի մթնոլորտ, ջրային կամ հողային ռեսուրսներ կատարվող արտանետումների կանխման ու վերահսկման նպատակով: Դա կնպաստի հավասար մրցակցային պայմանների ապահովմանը՝ համապատասխանեցնելով արդյունաբերական կառուցվածքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության ցուցանիշները: Այս առումով, L_S սկզբունքով արտանետման ցուցանիշների հաշվարկման մեխանիզմը թույլ է տալիս հավասարակշռություն ստեղծել աղտոտումը նվազագույնի հասցնելու պահանջների և իրական տեխնիկական հնարավորությունների միջև: Արդյունաբերական գործունեության վերահսկման միասնական համակարգի ստեղծմանն է ուղղված «Արդյունաբերական արտանետումների մասին (աղտոտման միասնական կանխում և վերահսկում)» 2010/75/ ԵՄ հրահանգը⁸:

Արտանետումների «տեխնոլոգիական» մոտեցման մեխանիզմի մշակման մեթոդական դժվարությունը լավագույն հասանելի տեխնոլոգիաների որոշումը և արդյունաբերական գործունեության հետևանքով առաջացող արտանետումների մակարդակի անհամապատասխանություններն են: Այս խնդիրի լուծման նպատակով տնտեսական և տողալական հարցերով գրադրվող եվրոպական կոմիտեն մշակել է որոշակի գործունեության համար L_S եւակետային փաստաթթերի մշակման ուղեցույց, որտեղ, մասնավորապես, նկարագրվում են կիրարվող տեխնոլոգիաները, արտանետումների և սպառման ներկա մակարդակը, այն մեթոդները, որոնք օգտագործվում են՝ լավագույն հասանելի տեխնոլոգիաները սահմանելու համար: Ուղեցույցը հնարավորություն է տալիս մեկնաբանելու «լավագույն հասանելի տեխնոլոգիա» եղբույթի առանձին հասկացությունները: Մասնավորապես՝ «լավագույն» նշանակում է ամենաարդյունավետը՝ շրջակա միջավայրի ամբողջական պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու համար: «Հասանելի» է համարվում այն տեխնոլոգիան, որի դեպքում հնարավոր է դրա շահագործումը համապատասխան արդյունաբերական հատվածում՝ տնտեսապես և տեխնիկապես իրագործելի պայմաններում՝ հաշվի առնելով ծախսերը և եկամուտները: «Տեխնոլոգիաները» ներառում են և օգտագործվող տեխնոլոգիան, և ձեռնարկության նախագծման, կառուցման, պահպանման, շահագործման ու շահագործման դադարեցման եղանակները:

Նման մեկնաբանությունները հիմք են ստեղծում սահմանելու «լավագույն հասանելի տեխնոլոգիաներ» և «լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների մակարդակներ» եզրույթները: Այսպես՝

«Լավագույն հասանելի տեխնոլոգիաները» որոշակի գործունեության իրականացման մեթոդների զարգացման ամենաարդյունավետ և ամենակա-

⁸ Տես Եվրոպական պաղլամենտի և խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 24-ի 2010/75/ ԵՄ «Արդյունաբերական արտանետումների մասին (աղտոտման միասնական կանխում և վերահսկում)» 2010/75/ ԵՄ հրահանգ, 2010/75/ ԵՄ (Եվրոպական պաղլամենտի և խորհրդի պաշտոնական տեղեկագիր L334, 17.12.2010 թ., էջ 17), <http://www.translation-centre.am/>)

տարելագործված փուլն է, որով նշվում է որևէ տեխնոլոգիայի գործնական համապատասխանությունը արտանետումների սահմանաքաներին, որոնք նախատեսված են կանխելու, իսկ այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ, նվազեցնելու արտանետումներն ու դրանց ազդեցությունը ամբողջ շրջակա միջավայրի վրա:

«Լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների մակարդակներ» նշանակում է արտանետումների այնպիսի մակարդակներ, որոնք արտահայտում են տվյալ ժամանակահատվածի միջին արտանետումները՝ սահմանված ելավետային պայմանների համաձայն:

Հաշվի առնելով որոշ առանձնահատուկ հանգամանքներ, որոնց դեպքում LСS-ին հատուկ արտանետումների մակարդակների կիրառումը կարող է հանգեցնել անհամաշափորեն մեծ ծախսերի՝ շրջակա միջավայրի համար առևկա օգուտների հետ համեմատած, իրավասու մարմինները պետք է կարողանան սահմանել արտանետումների այնպիսի թույլատրելի սահմանային քանակություններ, որոնք շեղվում են այդ մակարդակներից: Ուստի հարկ է իրավասու մարմիններին տրամադրել բավարար հնարավորություններ այնպիսի թույլատրելի սահմանային քանակություններ սահմանելու համար, որոնք տարբերվում են լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների մակարդակներից: Օրինակ՝ նոր տեխնոլոգիաների համար, որոնք կարող են ապահովել շրջակա միջավայրի պաշտպանության ավելի բարձր մակարդակ կամ շրջակա միջավայրի պաշտպանության առնվազն նույն մակարդակը և ծախսերի ավելի մեծ տնտեսում, քան շահագործվող լավագույն հասանելի տեխնոլոգիաները, իրավասու մարմինը պետք է կարողանա թույլ տալ ժամանակավոր շեղումներ լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների մակարդակներից:

Հնարավոր է մթնոլորտային օդի որակի չափորոշիչները (պահանջներ, որոնց պետք է համապատասխանի տվյալ շրջակա միջավայրը) ներառեն ավելի խիստ պայմաններ, քան առևկա լավագույն տեխնոլոգիաների կիրածմանք սահմանվողները: Այս դեպքում թույլտվությանք պետք է նախատեսվեն լուսուցիչ միջոցներ՝ չիհականելով այն միջոցներին, որոնք կարող են ձեռնարկել շրջակա միջավայրի որակի չափորոշիչների համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Այսպիսով՝ աղտոտող նյութերի արտանետումների նորմավորման ոլորտի նորմատիվ-մեթոդական բազայի կատարելագործման հիմնական ուղղություններն են:

1. աղտոտման անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումների տեխնոլոգիական և տարածքային նորմավորման ներդրման մեխանիզմի մշակում,
2. աստիճանական անցում լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների մակարդակ,
3. իրավական այն նորմերի ձգորդում, որոնք վերաբերում են «լավագույն հասանելի տեխնոլոգիաներին» և տեխնոլոգիաները դրանց դասելու չափորոշիչներին:

ДАВИД АКОПЯН

Аспирант кафедры
„Экономики природопользования” АГЭУ

Усовершенствование механизмов нормирования выбросов вредных веществ из стационарных источников в РА.- В статье рассмотрены вопросы разработки и внедрения механизмов технологического и территориального нормирования выбросов вредных веществ из стационарных источников. Особое значение отведено механизму расчетов показателей выбросов по принципу “наилучших доступных технологий”, позволяющий сбалансировать требования минимализации загрязнений с реальными техническими возможностями и одновременно обеспечивающий условия для применения единого подхода контроля за уровнем загрязнения атмосферного воздуха.

DAVID HAKOBYAN

*Post-graduate at the Chair of
„Environmental Economics” at ASUE*

Improvement of Regulating Mechanisms of Harmful Emissions from Stationary Sources of Pollution in the RA.- The article deals with the issues concerning harmful emissions from stationary sources of pollution. The main focus was made on the civil and implementation mechanisms for regional standardization issues based on the principle of “the best available technologies”, which allows to balance the demands of minimization of harmful emissions with the real technical capacities and at the same time provides an integrated approach for the control over the level of harmful emissions in the air.